ՀՐԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

54

ՑՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՊԱՐՏ ՀՈԳՈՒ ԵՐԳԵՐԻՑ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 14 Декабря 1904 года.

Պետերբուրգ 1905
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

891.99
Հ-90

ՄԱՅՐԻԿԻՍ

Կաթողին Մէրի՛կ, հեռու ափերից
Ես քեզ եմ ուղղում իմ երգն ու դաշնակ.
Աշխարհի դարդով լեցուն իմ սրտից,
Օ՜, չի հեռանայ քո սուրբ յիշատակ...
Ա՜խ, թէպէտ վաղուց ցուրտ ածիւն դառած
Նինջ ես վայելում սուրբ հողի գրկում,—
Շիրիմիդ չորս դին ալ բալն ու կանաչ
Թափծոտ մրմունջով երգեր են հնչում,
Եւ թէպէտ վերջին անջատման ժամին,
Երբ դու հեռացար անյայտի աշխարհ,
Ո՜հ, ես չրկայի, Մէրի՛կ իմ անգին,—
Թափառում էի երկիրներ օտար,—
Բայց ես յիշում եմ, օ՛, ես լաւ գիտեմ
Քո սիրտը գթոտ, ազնի՜ւ, սիրառատ.
Այս կեանքի ճամբին քո շունչն է վսեմ,
Որ յոյս է սփռում իմ սրտին ապա՜տ...
Ա՜խ, Անոյշ Մէրի՛կ, Դու որ իբր հոգի
Անմեռ ես վե՜հ-վե՜ր յուշերիս դաշտում,
Այս ջերմ երգերը շիթով սրցունքի
Անմահ անունիդ ու քեզ եմ բերում...

1904. սեպտեմբեր

Ն Ա. Խ Ե Ի Դ Ա. Ն Բ

Թող հալածեմ ես...

Թող գոռ, երկաթէ հալածանքն յամառ
Ինձ միշտ հետևէ, որպէս ուրուական.
Աքսոր թող ընկնեմ աշխարհէ աշխարհ
Եւ էլ չունենամ ընկեր, ապաստան...
Ես չեմ ափսոսար...

Հոգ չէ, թող լինի.

Որպէս կախարդիչ սուրբ վերջալոյսին,—
Որ մահ ու կեանքի մէջն է հրդեհուած,
Երբ վառ յոյսերի ու վսեմ դարձնան
Ըստինքը կենսոտ սրտի շրթերից
Վանուում է յանկարծ... դանդաղ ու դաժան
Մութլի ոգին իր մօր արգանդից
Ելնում է առ դահ...
Եւ խաւարահոս իր շունչը մուժ-մէջ
Փչում աշխարհի անփայլ երեսին.
Եւ ոչ ստերներ, որպէս դահիճներ,
Դժոխք նայուածքով սուրում են չորս դին

Եւ վեհ արևի, վսեմ արևի
Ցոլքերը վերջին գոհում, հալածում...
Այդպէս էլ մարդիկ
Թող դուրը մոռցած՝ կեանքի ափերից
Ինձ միշտ հալածեն, պղծեն իմ անուն...

* * *

Որպէս մրրկի ահեղ ժամերին
Ամպերը մռայլ բանակ առ բանակ
Ծրարում են խիտ երքինքը խորին,—
Ծանր, գժոխածին փորձանքը դաժան
Եւ վհատութեան յորձանքն ահաւոր
Թող սիրտս ծածկեն, կաշկանդեն հոգիս...
Պարսաւը գժնեայ, հալածանքը գոռ,—
Որպէս նենգ հոգմեր, որ իրր բնութեան
Կրծքարոյս կամքի անմիտ երակներ,
Հոսում են թափանց... շնչով յաղթական
Փչում, հալածում մառախուղ ամպեր,—
Անգութ, անխնայ թող ինձ հեռանեն...
Ու ես թափառեմ յաւերժ անընկեր...
Ինչ կուզէ, լինի...

* * *

Բայց ուր էլ գնամ,
Որտեղ էլ լինեմ յաղթ ժամանակի
Խրոխտ ալեոր, փրփրուն ալեաց մէջ,
Ինձ հետ կ՚լինի Անհաս իմ փառքի
Պատկը վսեմ—ճակատս վշտաբեջ...
Եւ ինչ էլ լինի.

Սրար Աշխարհը Աստուած իր կոգմով
Դժոխք ծաւալէ, աւէր սատանայ.
Օ՜, միայն իմ մէջ հպարտ, կենսագով
Իմ գիտակցութիւնն միշտ անլաղթ մնայ...
Թող ես հալածուեմ.
Մեծ Ժամանակի ցանցում հրահեր
Ես ուր էլ լինեմ,
Ամեն տեղ հպարտ իմ միտքն ու տենչանք,
Որպէս անմեկին ու ջերմ ընկերներ,
Ինձ հետ կը լինեն. և իբր արեգակ
Յաւերժ կը շողան աղատանուէր
Հոգուս երկնքում..,
Թող ես հալածուեմ...

1904. Մայիս

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Խաչ. Կարծ-ին.

Եւ իմ Սիրտը դժողք, և՛ իմ Կուրծքը արնոտ...
Ու ես ծունկ չոքեցի վշտաբուխ այս կեանքի
Սեղանի առաջև...
Եւ կեանքի դաշտերից ու սրտի խորանից
Սև ցաւի ու արեան մտայիր խիտ ամպեր,
Որպէս լայն կնեհիռներ, յորդ եկան դիզուեցին
Իմ Աղտոտ ճակատին...

Եւ Աչերս յառած—իմ Աչերն արնաշիթ,
Ու հայեացքս պղտոր—և ցաւոտ իմ դէմքին
Հոծ դժոխք էր խաղում... և ճակտիս տարածուած
Վշտազեղ, կնճռոտ ամպերի շարքերում
Մերթ Կայծակ էր ցոլում, սև Կայծակ էր լողում,
Եւ ես համր էի... լալ...
Կեանքի Ծովն իմ առաջ ալիքներ էր նետում,
Լեռնապէս Ալիքնե՛ր... Կոհակները ահեղ
Կատաղած, փրփրած. ու վրշշում ու լալի՛ս...

Պնպտում, որոտում էին դոռ... և սակայն
Դևի պես նրանք ջանում էին վե՞ր բարձրանալ.
Դէպի վե՞ր Աստուծոյ, Անհունի այն հզօր
Անհաս Կուրծքը հեղքե՞լ...

Եւ հեղեղ էր թափւում երկնքից. խօլ հեղեղ
Շանթերի, որ անվերջ գալարւում էին դոռ,
Գալարւում մեծ ալեաց լերանց մէջ... և ահեղ
Հեղեղատը շանթի կարտում էր թափով,
Փշուր փոշի էր անում այն լեռները ալեաց...
Եւ Կայծակը փշրում էր կեանքի երեսին
Կուտակւած ծով Ամպերը...

Եւ կեանքի տաղնապոտ այդ ժամին շատ Եսեր
Մոլորւած դեղերում էին լոկ Խաւարի—
Անթափանց Խաւարի ճանկերում...
Եւ լոկ Սով... կատաղեալ հոգու Սով էր տիրում
Մարդկային սրտերում վշտածոր...
Եւ ճչում էր ահե՞ղ ապատ Խիղճը դերւած,
Ու ճչե՞ւմ, ու կանչե՞ւմ... Եւ երկիրը կաշկանդ
Ցաւերի Փոթորկից և հոգու մեծ Սովից
Զարգանդում էր... դողում...

Եւ եկաւ մութ Կեանքի էութեան ու Մաքի,
Եւ Զարի, և՛ Բարու, և անծայր տանջանաց
Հարցերի մեծ հեղեղը.—եկաւ դոռ թափով
Հեղեղատը հուժկու—հեղեղատն հարցերի՞...
Ու զարկեց իմ կրծքին. ու փշրեց իմ կրծքի
Սև կապանքը կնճռոտ... Մանրութեան...
Եւ փշրեց ահարկու պայթիւնով իմ հոգու

Ղղթանները անմիտ... ու իմ կուրծքը բացուեց.
Եւ իմ կուրծքը արիւն ու կրակ հեղեղեց,
Եւ լեզուս էլ բացուեց...

Ու իմ Խօսքը զայրոյթ, և իմ շունչը կարող...
Ես Մարով եմ ահեղ, թեւաւոր՝...
Այսուհետ ես Հոգի եմ հպարտ—
Սառեղծող ու կերտող վեհ Հոգի զրաւոր...
Եւ սրտիս Արկնածին ակունքից
Յորդ բացուեց մեծ ազբիւրը հպարտ յոյսերի,
Ու վառեց անհուն կիրքը նորոգ վեհ կեանքի
Ու վառեց ու այրեց... ես հպարտ եմ, անյաղթ.
Այսուհետ ես հեղեղ եմ Հոգու, Մեծութեան...
Ես Աստուած եմ, Հոգի՞...

1903. Յունուար

Դ Ա Ր Բ Ի Ն

Ոսկան Համբարձումեանին.

Մաքէ կայծակներ շանթող քաջ Դարբին,
Որ կեանք ու հոգի դիտես միշտ կռել.
Ինչո՞ւ, ինձ ասա՛, դորձապուլ, անհոգ
Կռան Զնդանին դարդար ես տալ...
Կայծակին նայիր,
Ճակատդ լայն բա՛ց.
Ու կարող ձեռքով
Նետիր յաղթ հարուած...

* * *

Ու զարկ, զարկ անվերջ երկաթէ Սրաեր
Ասուած հոգիներ կռող կռանով.
Այդ Ասուածաշունչ Զնդանիդ վերայ
Թող ծնունդ առնէ շանթէ Մաքի ծով...
Հպարտ անհունին
Հաւասար եղբայր
Զնդան ու Մուրճով
Հրդեհի՛ր Աշխարհ...

* * *

Տիեզերքը հանուր հոգեբուխ Դարբնոց,
Հոգեծին արդանդ Կռանն ու Զնդան.
Կայծակը քեզ ծեռք... ու Սիրտդ որո՞տ,
Կռի՛ր ու կռի՛ր... կռի՛ր յաւիտեան...
Սրար Աշխարհը—
Գարշ, գծուծ զանգուած,
Կրակի՛ր, դարձրու
Մի՞աք, Հոգի՞ կռած...

* * *

Լաղուրը լաղարթ ասաղերով ցիր ցան
Դարբնոց երագին թող փառք նուագեն
Մասիս, Արարատ, և՛ լեառ, և՛ հովիտ
Բեղնով կրակուած թող Հոգի շնչեն...
Ու կեանքն ու սրտեր,
Ու Զարն ու Բարին
Թող ի մի կազմեն
Հրաշունչ Հոգին...

* * *

Դարբին քաջարի, ճակատդ ապա՞ա,
Վերցրու յաղթ Կռանն ու դարկ Զնդանին,
Ու զարկ, զարկ անդուլ, կռի՛ր ու կռի՛ր,
Որ գծուծ Աշխարհն առնէ իր ուզին...

1903 Նոյեմբեր

ԵՐԿՆՔԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

Սարգիս Մանուկեանին

Երկնքի՜ խորութիւն...
Օ՜ անհաս, երաղուն բարձունքներ.
Ա՜խ, ինչո՞ւ անկարող է Հոգիս
Ձեզ պէս խո՞ր, ձեզ պէս բա՞րձր լինել...
Իմ Հոգին էլ ձեզ պէս մրրկոտ,
Մեծ արգանդ է հպարտ Կրքերի...
Կրքերի, որ անհո՞ւն վեհութեամբ
Պրպլում են բոլոր ասաղերի...
Երբ մժոտ այն ամպերը դաժան,
Որպէս նենդ ոգիներ երկնային
Մերթ սողում, մերթ լողում են անձայն
Ձեր մռայլ, ձե՛ր խոհուն ճակատին,—
Խիտ խմբեր վշտահիւս ամպերի,
Որպէս չար կենսածին ոգիներ,
Հագած սև՜, ժանր հագուստ ցաւերի,
Հոգուս մէջ են լողում անարգել...

* * *

Երկնքի խորութի՜ւն...
Երբ դու ջի՜նջ ես, բիւրե՜ղ ու խոկուն,
Եւ հսկայ Հայելուդ անդունդից
Երևում է Աստուածը Անհուն,

Եւ իմաստ է կաթում քո Կրծքից,
Իմ հոգու ջինջ, դուլպ երկնքի
Լազուրից շողշողում է Արև—
Ցնորքի ու փառաց վեհ զեղում.
Եւ դարուն է հոսում սուրբ Սրտիս
Մեծ Աւետան աղբիւրի ակունքից...

* * *

Երկնքի՜ խորութիւն...
Անյայտի բարձունքներ խո՜ր ու լա՜լ...
Իմ հոգին է ձեր վեհ բալանին,
Նա գիտէ ձեր Դռները բանալ...
Բարձունքնե՜ր... Թող անչափ մեծ լինեն
Ցաղթ ծովերը հղօր Անյայտի...
Եւ յաւէտ էլ անօղ, դուր անցնեն
Երկրածին թռիչքները Մտքի.
Բայց էլի վեհ հոգիս է ապա՜ռ.
Նա գիտէ կուրծքը ձեր թափանցել...
Օ՜, գիտէ նա տոկո՜ղ, ճառնչա՜ղ
Եւ Փականքը ձեր պիրկ արձակել...
Մտքից վե՜ր երկնային բարձունքներ
Եւ յստակ լազուրի խորութի՜ւն.
Ա՜խ, ինչո՞ւ անկարող է հոգիս
Ձեզ պէս խո՜ր, ձեզ պէս բա՜րձր լինել...

1904. Մայիս

ՋՈՒԼՀԱԿՆԵՐ

Երկնքի ծնունդ, Արևի զաւակ,
Բաշ աշխատաւոր Մոքի Ջուլհակներ,
Որ նակատ ունէք երկնի պէս ապատ,
Երկաթէ մկան, ամրակուռ ձեռքեր...
Շանթի պէս ահեղ
Ձեռք զարկէք Գործի.
Ձեր Թափն ու Հանճար
Նոր կեանք կ'ստեղծի...
Նման Անհունի արև՝ ու ասպղին,
Որ մեծ Աստուծոյ Դաղպահն է, Դիւանն.
Ջուլհակ ու Գղրար, ձեր կուրծքը արնոտ,—
Դաղդահ կանգնեցէք հոգու Վեհութեան:

***

Ձեր նակտին կնճիռ, ձեր կրծքում աւիւն.
Գործի վիճակուած Բանուոր ու Ջուլհակ...
Ձորս կողմը նայէք... կապանքը հեռու,—
Կեանքի կամարում դեռ կայ արեգակ...
Եւ քանի այս վեհ Ցիկերքի բովում
Շնչում է Դաղդահ մեծ Աստուածութեան.
Եւ ամպն ու եթեր, լապուրն ու ասպղեր
Վսեմ, հոգեբուխ մանած են նորան,

Վշտի սև ամպերն
Ձեր յաղթ սրտերից,
Փրփինքն արնաշիթ
Ձեր լայն ճակատից
Վ՞ւ՞հ ազատութեան անմե՞ռ շնչի տակ
Երկի՞նք կը թռնեն, յաղթանա՞կ կ՚երգեն...
Դաղդահին զարկէք Բանեւոր ու Զուրհակ,
Ալիքներ Գործի թող կեանքը գրկեն...

* * *

Հողմերն աշխարհի թող նիւթ կուտակեն,
Եւ մանած մանեն կեանքի անիւներ.
Այդ ողջը աւէք Դաղդահի բերան,
Դղէ՛ք ու գործէ՛ք մեզ ազատ օրեր...
Այդ նորոդ կեանքի թերթերն են վսեմ,
Հինւած [1] Դաղդահի վերայ կախարդուն,
Թոխիչն [2] ու Թոխմահ [2], մարանչ ու մանած
Այդ ձեզ են կանչում դէպ Գործը անհուն...
Աշխատաւորներ,
Ձեր յոյսը Արև...
Երկունքով ծնէք
Դարձեն յարատև...

[1] Հինուել-Հեմնուել. Հինել խօսքը գործ է ածւում, երբ ուզում են ասել. Հիմքը դցած է, գործքը սկսած է։

[2] Թոխիչ կամ Թոխմահ, երկուան էլ գործիքներ են, որանցով թակում, ամրացնում են գործքը։

* * *

Գարնան շողքի տակ թող ծիլ արձակեն
Մեր Ազատութի՜ւնն... Ատաւնծը Մաքի...
Գործից ու Մաքից հոսէ հեղեղատ,
Գործո՞վ են ազատ Սրտերը փառքի...
Դէ՜հ, Գործի դեղուն
Ցրէ՛ք աչ ու ձախ,
Զարկէ՛ք անպարոն.
«Թո՜ւխխ, Թա՜խխ... Թո՜ւխխ ու Թա՜խխ...»

1904. Պոլիս

Ա 28284

ՄԱՆՀՈՒՆԻ ԵՐԳԸ

Մանի՛ր, մանի՛ր իմ ծախարակ,
Ցաղթ ժամանակ.
Խոժոռ Ոգու մալանչներից
Մանի՛ր օրե՞ր, Կեանք ու Ցանչանք.
Կենսակծիկ սև՞ դարերից
Մանի՛ր Անցեալն —մահացուցակ...
Ականջներդ թոյն եմ ածել,
Դէ՞հ շուտ շարժե՛ր, որ վի՞շտ մանեա...
Անէծքն է Քեզ Աշխարհ բերել,
Որ Յոյսերին պատանք հիւսե՞ս...

Քո Անիւը կայծակաթև.
Ճաղեր ունես—շանթէ Լիսեռ—
Քո Սռնակը կեղծիք ու դև,
Ունես հրեղէն Խայթոց, Բևեռ...
Անդէտ Ոգին Քեզ ղեկավար,
Աշխարհը ողջ Քեզ օթևան,
Պտտուում ես անհաս, անճար.
Ծորում Շարժում սիեղերական...
Մանի՛ր, մանի՛ր իմ ծախարակ—
Գոռ ժամանակ,
Մանի՛ր Ցաւե՞ր հաստ ու բարակ...

Ժիր են Մարդիկ. Մաքով խիզախ
Էութիւնս կուզեն գիտնալ,
Կուզեն լինել Հոգի անկախ,
Ճշմարտութեան դուռը բանալ։
Որպէս հովտի լացող ուռին,
Իր ճիւղերը վշտից թեքած
Անկարող է շիտակել կրկին,
Այդպէս նոքա տենչով լցուած,
Ուռնայն Մաքի կամարի տակ,
Անկարող են ինձ ըմբռնել,
Մանի՛ր, մանի՛ր իմ ճախարակ,
Վեհ ժամանակ,
Մանիր քուլայ, քուլայ կեանքե՞ր...

Դեռ առաջի կեանքի օրից
Մարդը ուզեց ինձ ըմբռնել.
Բեղ նիւթել եմ Ես իմ կրծքից
Մաքի թափին արդելք լինել։
Դու այն օրից անխոնջաբար
Ժիր մանում ես Քո Քուլաններ,
Եւ մանածից մարդկանց համար
Սխալանքի ծորում ծովեր...
Քո հանոյքից — Դառն օրերից,
Սև Ստութեան նիւթուած ծովում,
Մարդն է լողում իր ծննդից,
Յաւէտ տանջւում, յաւէտ խաբւում...
Մանի՛ր, մանի՛ր իմ ճախարակ,
Գոռ ժամանակ.
Մանի՛ր մալանչ սև՞ ու սպիտա՞կ...

Միշուկդ լի դժոխք, արի՜ւն,
Հոգիդ լցրել եմ կոյր Կամքով.
Քո մանածն են ծմեռ, գարուն,
Երկինք-Գետին պերճ հիւսուածքով
Անմտութեան Շունչը Քո մէջ,
Քեզ աւած է շանթէ թևեր.
Դէ՛հ շուա շարժի՛ր, մանի՛ր անվերջ—
Զարն ու Բարին, վշտէ թելեր,—
Զախորդութեան սև Ոմպերից
Կեանքեր հիւսի՛ր, Նիրիմ Նիւթի՛ր.
Կծիկ արա այդ Մանածից,
Իլկիդ վերայ մի՜շտ փաթաթի՛ր...
Թող Միաքը թոյլ և ծաղրարժան
Զուր դալարի՜, անվերջ տակա՜յ.
Նա անպօր է... Ճշմարտութեան
Լոյսից Նորան բաժին չը կայ...
Կայծակի պէս դու թափ ունես,
Դէ՜հ շուա շարժիր իմ Ճախարակ,
Յաղթ ժամանակ.
Անելիքդ Դու լաւ գիտես...
Մանի՛ր կեղծի՜ք հաստ ու բարակ...

Թշուառ Մարդիկ, խղճուկ Սրտե՜ր,
Որ սնուում են Ստութեան մէջ...
Նոցա դիւթում են Ցնորքներ,
Պերճ Երազի դաշտեր անվերջ...
Թապաւորներ ունայն կեանքի,
Խաբեաց անմիտ և խուսափուկ
Երկրի Փառքով, դեռ մերթակի

Կռիւներ են մղում անծուկ...
Սեղ Կուլ դաշտերն արի՜ն,
Վրէ՜ժ ու դա՜տ են մրմնջում...
Որդեկորոյս Մայրերն անտուն
Սրցունքի ծով են հեղեղում...
Եւ ի՞նչ... դծուծ Գանձն ու Պարծանք,
Սզատուրթի՜ւնն ու Գերութի՜ւն,
Անուրջ ու իդձ և զարդ, պատրանք,
Կայծակաշունչ Թափովդ անհուն
Կործանում ես, մէկէն փշրո՜ւմ,—
Եւ ողջն ածիւն, մոխի՜ր դարձնում...
Մանի՛ր, մանի՛ր իմ Ճախարակ,
Գոռ Ժամանակ.
Լիսեռներդ պատի՛ր.
Մանի՛ր դժոխք, մա՜հ ու կրա՜կ,
Մարդոց Սրտի՜ն փաթաթի՛ր...

1903. Նոյեմբեր

ԳԶՐԱՐԻ ԵՐԳԸ

Հոիփսիմէին

Դեռ մեր կեանքը չունի Արեգակ,
Մեր հոգուում քարացած է Խաւար.
Բայց մեր Սիրտը տոկուն համարձակ,
Մեզ նոր Կեանք կստեղծի մեր Հանճար:
Որպէս Մէղը կնեռոտ, ծովացած
Վաղորդեան լուս ու մութ ժամերին,
Որ խոժոռ, համբրօրէ՞ն դէղ դիղւած
Ծանրանում է լեռան ուսերին.
Այդպէս Բուրդը անդիդ, խառնիխուռ,
Որ ծնունդ է կենաց Յորձանքի,
Կուտակւած է մեր դէմ մունջ ու լուռ,
Պէտք է Գործ ու Զեռքի, ու Մտքի...
Ահա՛ սուրբ մեր Զաքին [1], մեր Անեղ. [2]
Դէ՞հ դղենք առյաւէտ յաղթաբար,
Բը՞ղղ ու դը՞ղղ... դրղղ ա դրղղ... չա՞խ ու չէ՞խ...
Մինչ մեզի լոյս Արև՞ ծագէ վառ...

---

[1] Զաքի—երկաթէ գնդաձայր գործիք, որով գզբարը գզելիս զարկում է գզող լարին։

[2] Անեղ—այն կիսաշրջան գործիքն է, որի վրայ ամրացրած է լինում դիդ անող լարը։

***

Մեր կնճիռն է, կնճի՜ռը Մաքի,
Մեր ճակատին ազգրհայ լերան պէս.
Մեր վեհ Գործն է արդանդը Փառքի,
Որ հոգ կեանք է զգում փրփրապէզ։
Բաց ընկե՛ր, ա՜խ, նայիր դէպ հեռուն,
Տե՛ս, ինչպէ՜ս մութ կեանքի անդունդից
Ալիքներ են գալիս մռընչուն,
Կատաղած շան նման փրփրալից.
Եւ ինչպէս Կոհակները դաժան
Ուսերին դրած Բուրգ են բերում,
Գգելու Անեզով վիհութեան.
Զաքին ա՛ռ ու գգե՜նք անդադրում...

***

Շատ վաղուց, դեռ հզօր Ժամանակ,
Որպէս բոյս, Աստծոյ Պարտիզում,—
Որ Տիեզերքն է անհուն, անչատակ,—
Նոր-նոր ծիլ էր դցում, արձակում.
Ալիքները այդ գիժ այն օրից
Անդիզ Բուրգ են կրում անսպառ
Սրտի մութ և անլաց Զորերից,
Բուրգ ախտա՜ռ, չը զուա՜ծ ու խաւա՜ր...
Կենսածին այս Բրգում միաձև
Խճճուած են ու Զարն ու Բարին,
Ճշմարիտը, կեղծիք, Սուտը սև
Եւ բի՜ւր բի՜ւր դարշ Ախտե՜ր մթածին...

Բայց մեր Զեռքը ազատ, քաջ ընկեր,
Մեր Անեղը կայծակ երկնացող.
Մեր Զաքին է հոգին անվեհեր,
Զարկ, զաե՛նք, զզենք Բուրդը խոժոռ...

* *

Եթէ Բուրդը այս մութ, զզեալիք
Իր մէջ Ծէրքը [1], լոյս Արև՞ էլ ունի.
Թէ փառաց մեծ Գարուն կայ գալիք,
Այդ Անեղ ու Զաքին կը ծնի...
Եւ քանի երկնքում շողշողան
Ճշմարտի վեհ աչերը—աստղեր,
Եւ ծովում ալիքները դաժան
Միշտ ոռնան, կրծոտեն մութ ժայռեր.
Թող անդուլ կայծկատայ յաղթ Անեղ.
Ու Զաքին էլ շանթէ վեհ հարուած,
Դէ՞հ, զզենք Բրդի դէզը ահեղ,
Գզելու է այս Բուրդը ծնուած...

* *

Մենք գիտենք. Մեծ Աշխարհը արար
Վեհ Գրրոց է ազատ ու համաչն.
Ժամանակն է վսե՞մ, դոռ Գրրար,
Որ գզում է անյաղ, անսահման...
Նա գզում է, ջոկում իրարից
Վսե՞մ Ծէրքը, խաւար դարշ Օռւանք [2]...

---

[1] Ծէրքը—գտուած, գզուած մաքուր բուրդ։

[2] Օռւանք, բրդի անպէտք մասը, որը գզելով դուրս են բերում։

Եւ Անհուէնը, Աստուած իր Գահից
Մեծ Գործին այպ տալիս է օրհնանք...
Դէ՞հ, դղենք Բուրգը մութ, լեռնացած,
Եւ դիզենք Ծէրքը ջոկ, Օձանք ջոկ.
Զարկ ընկեր, Աշխարհում չենք ծնուած,
Որ սողանք միշտ անգործ ու անհոգ...
Թող մեր Գործն հոգեբուխ, աւիւնոտ
Մեր Սրտում կազմէ նոր լոյս Կամար.
Որ գգենք, Արեգակը շողոտ
Մեր հովտում կը փայլէ յաւտաւմա...

1904. Յուլիս

ԿԼԷՅԶՈՒ ԵՐԳԵՐԻՑ

Հայրիկիս

Է՞յ ընկեր, Արեգակը վսեմ,
Իր ղլուխը հանեց խոր քնից.
Եւ չորս դին ամեն ինչ ջերմաջերմ
Նա շոյեց ժպիտով յուսալից։
Եւ Մշուշը կնճռոտ ու խաւար,
Ցեսնելով ազատ Շողն երկնաւոր,
Հեռանում է, ահա՛, սողիսող,
Փաշուելով Արևից փառաւոր։

Ընկե՛ր, բա՛ւ է, որքան մոռացուած,
Մենք դատար առանք սուրբ մեր Գործից.
Բե՛ր, սարգենք մեր Դաղդահը օրհնուած,
Սուրբ Դաղդահ, որ ծնունդ է երկնից։
Մեր ոգջ կեանքը է՛կ տանք այս Գործին,
Մենք սրբենք առյաւէտ Ամաններ.
Մենք ուենենք վեհ Կլէկ [1] փառաժին,
Որ մաքրում է Հոգի ու Սրտեր...

---

[1] Կլէկ—մնտաղ է, որով ամանները սրբելուց յետոյ, վերսրբում են, փայլեցնում։

Ինչպէս յաղթ ալիքները յուշայուշտ.
Մովի խոր անդունդից անարդել
Կեղտ ու Աղբ են քշում դէպի ափ
Եւ ցայսօր անբաւ Աղբ են դիզել.
Այդպէս էլ, բարկաճայթ այս Կեանքի
Մութ Ցորձանքը Սխտեր է կրում.
Եւ այդ ողջը խղճուկ ու թշուառ
Մարդերի Սիրտ-Հոգումն է դիզում։

Կեղտ ու Աղբ Աշխարհի սկզբից
Հա՛ դիզել, հա՛ կիտել են Սրտում.
Եւ Արևը յոյսի՝ ժանտ ախտից
Մեզի լոյս չի՛ տալիս, չի՛ սփռում...
Պէտք է Գործ և Կէկ սրբարար,
Որ Սրտից այդ Սխտերը հանել.
Պէտք է Զեռք, և՛ Մկան, և՛ Հանճար,
Որ Կեանքի մեծ Դարուն հիւսել...

Եւ եթէ երկնքում այն լաղուր
Կայ վսեմ Գործերին հատուցում,
Օ՜, անհոգ կա՛ց, ընկե՛ր, մենք մի օր
Տեսնելու ենք Դարուն անարատում...
Դէ՜հ, ընկե՛ր, մի՛ քնիր և տոկուն
Զեռքդ զա՛րկ վեհ Գործի Դաղդահին,
Շատ Աշնօթ կայ մեր դէմ սրբուելիք,
Որ կարօտ է մեր յաղթ Հանճարին...

Տե՛ս, այս Սիրտը մի օր լուսեղէն
Ճառագայթ էր սփռում աջ ու ձախ.
Նա մեզի Վեհութեան բարձունքէն

Շողշող�՝ում ու կոչում էր յանախ...
Բայց այսօր... այսօր ժանտ Ախտերից
Ախտահիւս Վերարկու է հագած.
Գարշն ու Սուտը, Կեղծիք մթալից
Նորա մէջ կայուն Բուն են դրած...
Այս Ամանը, տե՛ս, սև՞ է, դժխեմ.
Օ՞, մանկութ ես յիշում եմ դորան.
Վեհ Հոգի՞, վեհ Անո՞թ էր վսե՞մ.
Նա բաղձանք էր մեղի Սրբութեան:
Տե՛ս, ինչպէ՞ս Նորա մէջ այլանդակ
Գարշ Որդեր սողսողում են դէս դէն...
Նայի՛ր, Կա՞նթն է կոտրած... Կողը ծա՞կ...
Այսուհետ նա անպէ՞տք է արդէն...

Օ՞, եթէ վեհ Կլէկ չը լինի,
Կը փտեն Կեղտի մէջ Ամաններ,
Որ ծնունդ են Լոյսի՞, Արևի՞.
Դէ՞հ քսիր, դէ՞հ կոկի՛ր վեհ Սրտեր...
Մի դադրիր. շուտ արա՛, հա՛ սրբիր.
Առ Փոշին, ա՛ռ Անծոց շաղաղած,
Հա՛ քսիր, հա՛ կոկիր Ամաններ,
Որ կեանքում Սիրտ, Հոգի են կոչուած...

1904. Յուլիս

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԱՐԴԸ

Ասա՛ դու ինձ, ասա՛ այ մարդ տարօրինակ,
Այս Աշխարհում, մեծ Աշխարհում ամենէն շատ
Ի՞նչն ես սիրում, ի՞նչն ես պաշտում...
Մտերմութի՞ւնը անձկալի ու սիրառատ...
Թէ՞ ծնողաց դուռը վսեմ այն երկնածին,
Թէ՞ վեհութիւնը «մերձաւոր» դիւթիչ անուան...

—Մտերմութի՞ւն... Այո՛, ունեմ, դիտեմ սիրել.
Սիրաս կը տամ Մտերմութեան վեհ բարձունքին։
Ես դեռ մանկութ Մտերմացայ սրտանուէր
Միշտ հարազատ, հաւատարիմ ընկերներին.
Մայրս հաղիւ զատեց դիմոտ ինձ իր կրծքէն,
Հաղիւ լսեց ջինջ թոթովանքն իմ առաջին,
Հէնց այն օրից ընկերացայ ես Վշտի հետ,
Եւ Կեանք մտանք Մենք միատեղ ու անմեկին...
Մի քիչ յետոյ Ցուրան ու Զարիք,
Քիչ էլ յետոյ Սովն ու Կարիք.
Եւ միշտ մի տեղ, միշտ միասին
Ո՜ւխտ կապեցինք, ո՜ւխտ սրտագին,

Մտերմությունն այս անբերկրանք
Անխախտ պահել երկնքի տակ...
Եւ մենք այնքա՜ն, այնքա՜ն իրար
Նուիրեցանք ջերմ ու սրտանց,
Որ երկնի տակ, կեանքում իսպառ
Էլ մեզի պէս չկայ սիրուն
Անդաւաճան վե՜հ Միութիւն...

Իսկ ժնո՜ղներ... Դեռ այն օրից երբ իմ մատաղ
Միտքը թափուտ դիտէր հեռու, հեռո՜ւ ճախրել
Եւ մանկական բիւրեղ Սրտիս վեհ քնարին
Երազանքի ժաղկաղաշտեր մերթ յօրինել...
Մնողներիս սրտանուէր
Ես ճամբեցի Մեծ Անյայտի Աշխարհը մութ...
Այնուհետև անտո՜ւն, անմէ՜ր
Ես Որդեգիր առմիշտ դարձայ այն բարեգութ՝
Անյուսութեան երկրէն եկած չար Հողմերին...
Դոցանից զատ, լաւ իմացի՛,
Այլ մերձաւոր դեռ չեմ տեսել,
Ոչ էլ դիտեմ. ո՜, քաւ լիցի,
Չեմ էլ կարող այդ ըմբռնել...—

Բայց ինձ ասա՛, ով անսովոր խստասիրտ Մարդ,
Այս կախարդիչ հրաշագեղ երկնքի տակ
Դու չե՞ս գտնում որևէ բան Սիրուդ արժան...
Ի՞նչ ես ասում Գարուններին՝—
Այն զարդ, փարթամ, խենթացնող Գեղեցկութեան.
Ի՞նչ ես ասում վեհատեսիլ՝
Ամուսնաձների շողք ու ժպիտ Արշալոյսին...

Օ, մի՞թէ քո Սիրար, Հոգին չի հմայում
Այն ջի՜նջ ու լա՜ լ խորութիւնը անուրջային,
Ուր վառ Աստղեր—երկնից Աչեր
Գիտեն կանչել հեռուն... հեռո՜ւն այն անտառում...

— Պերճ Գարուններ, ո՜, քաւ լիցի.
Անլոյս կեանքիս անփայլ ուղին
Միշտ օտար է եղել փարթամ ու կախարդուն
Գարունների զարդ ժպիտին...
Ես չգիտեմ այլ Գարուններ,
Բացի իմ վեհ Գիտակցութեան, վեհ Տենչանքիս
Միշտ արևո՜ղ, միշտ հմայո՜ւն Գարուններից...
Օ՜, քաւ լիցի... Ես արտաքին այս Աշխարհում
Դեռ դրաւիչ բան չը գիտեմ.
Չի Բնութեան Պճրանքը ողջ—Գեղեցկութիւն
Անդրադարձումն է իմ Մտքի անհաս Շէնքին.
Եւ ի՞նչ է նա... թէ ոչ բիւրեղ մի Հայելի...
Օ՜, ես գիտեմ այդ հայելում անդրադարձող
Այն Շէնքը կերտ սիրե՜լ, պաշտե՜լ,
Որ իմ Հոգում—իմ մեծ Հոգումն է զաղտնացած...
Նա է իմ վեհ Սէ՛ր ու Երկի՜նք, Ա՜ր և, Գարո՜ւն
Եւ էլ Աստուա՜ծ...

1904. Սեպտեմբեր

ՄԻՏՔՆ ՈՒ ԿԱՊԱՆԴԸ

Ժայռերը կնճռոտ, նօթերը կիտած,
Հպարտ ու մենակ կանգնած են տխուր.
Հսկայ փէշերը չորս դին տարածած
Յամառ յեղնութեամբ նայում են նոքա
Աշխարհի Կուռքին, կեանքի Տաճարին,
Ամպաչու գլխով երկինքը հասած
Ծաղրանք են նետում հանճարի Մտքին...

Նոցա ամպրհայ փէշերի տակից
Երկունքի ցաւով Աղբիւրն է խոսում...
Կաշկանդող լերան բռնի ճանկերից
Ջրերն աղմկող հեռու են հոսում...
Փրփուրը բերնին վէտերը կայտառ...
Յուզում են... վրշշում, ցայտում դէպի վե՜ր...
Կապանքը կրծող Յորձանքը յամառ
Հնչում է ազատ Տանջանք ու Երգե՜ր...

* * *

Հեռու ծովերից, Անհունի գրկից
Սև՜ սև՜ ու խոժոռ գալիս են ամպե՜ր.
Զգաստ են շարքով իրար յետևից,

Ասես թշնամու անհամար գնդեր...
Ժայռերը դաժան, ուսերը մեկնած,
Զայրոյթը իրենց երկնահաս ճակատին,
Կանչում են զօրքը, կանչում գրկաբաց.—

— Հէյ-հայ սև՜ ամպե՜ր, տարագիր զօրքեր,
Որ մի՜շտ, անկայան շրջում էք մոլոր.
Ո՞ւր է ձեր տերը. ինչո՞ւ է թողել
Ձեզ օտար երկրում պանդո՜ւխտ ու ազո՜ր...
Եկէք դուռնդիդուռնդ. ուսերը մեր լայն,
Որ կո՜յս են յաւերժ, անմատո՜յց, ազա՜տ,
Ձեզ վե՜հ, քաջարի կը տան օթևա՜ն—
Միշտ գա՜լ, ծրարե՜լ մեր դէմքն ու ճակատ...—

Մա՜ռթ... թանձր խաւար. գիշերը մռայլ
Իր գիրկը առաւ Աշխարհը լռին.
Զօրքերը Ամպի գանդա՜ղ, յաղթաբա՜ր
Բանակ զարկեցին լերան ուսերին:
Եւ երբ ոխերիմ ու մռայլատես
Թշնամիների այն խուլ բանակում
Շանթի զրահներ, օձերը ասես,
Ցոլացին... պայթեց դղորդ-որոտում,
Ժայռերը հպարտ, յօնքերը կիտած—
Զայրոյթի ծովեր դժխեմ աչերին—
Կծո՜ւ, նենգօրէն նայելով դէպ ցած,
Ընկա՜ն... ծանրացա՜ն Ադրիւրի գլխին...
— Հը՞. դերուած ես այժմ... ու շղթայակապ
Զգո՜ւմ ես առջևդ քո Մահն ու Գրոզ...
Խոմ տեսա՞ր հսկայ մեր Կորոմն ու Թափ.

Դէ՜հ, մեռի՛ր. քեզ մահ, Ագբի՜ւր աղմկող...
Հա, հա՛, հա՛... Թշնա՜ռ, մեր փէշերի տակ
Առմիշտ ցամաքի՛ր—դոչեցին ժայռեր.
Թող տեղդ մնայ շիրի՜մ... աւերա՜կ...
Քո բախտը մենք ենք—Թնդացին լեռներ...

— «Իմ Շիլթն ու Յորձանք անդուլ կը հնչեն.—
Լեռների տակից մրմնջաց Ագբիւր.
— Կապանքները այս երդ են, կանչեն,—
Մէկէն դոչեցին կոհակները բի՜ւր...

Յաղթական երգով Ագբիւրը բիւրեղ
Ասա՜ց, գալաբեց մարգարտի Շիլթեր.
Ցնծուղն ու մրմունջ, արցունք լուսագեղ
Եւ կոյս կարօտով լեցուն վեհ երգեր
Արագ ահեցին դէպ հեռո՜ւն... հեռո՜ւն...
Ուր շողում էր միշտ լոյս Ազատութիւն...

* * *

Դարե՜ր, բի՜ւր Դարեր որպէս Կարաւան
Այն օրից 'ի վեր եկել են, անցել...
Իսկ Միտքը այսօր—չինչ Ագբիւրը այն,
Որ կոյր Տանջանքի սրտում է մնալ,
Անո՜վ ու Յաւե՜րժ Տիեզերքի համար
Դարձել է անմահ ոգեշունչ Արև՜...
Եւ վեհ ժպիտը նորա կենարար
Լուսաւորում է օրերը մեր սև՜...
— Ասա՛, Աշխարհի կենատու Ագբիւր.
Ո՞ւր են քեզ խեղդող Կապանքներն ունայն...
— Հսկայ Թեի տակ Դարերի հանուր
Մեռած են նոքա... լուծուած են... չը կա՜ն...

Զ Ա Ն Գ Ը

Մենք անցուոր ենք, կեանքն էլ անցուոր,
Ու գնում ենք հեռո՛ւ, հեռո՛ւ...

«Դ՞ըմմ-գո՛ւմմ... գ՞ըմմ-գո՛ւմմ...
«Զ՞ընգ-զրա՛ննգ... զ՞ընգ-զրա՛ննգ...
Կոյս Անյայտի յաւերժական արգանդներից
Հնչող Զանգի խենթացնող հոծ արձագանք՝
Ցխո՛ւր ժամին անփայլ կեանքի,
Ցնցեց լարերն իմ սուրբ Սրտի...
Եւ նառադայթը վեհ Հոգուս նախրեց նորից
Ցնորքների ասեղանի՞շ կամարի տակ...

Եւ տեսնում եմ. ահա Կերտող Աստծու պէս
Կայծակաձին թև՝ ու թափ՞վ նաւը Մտքի,—
Որ ճեղքում է մռայլատես
Ալիքները մեծ Եթերքի...
Որ քաշարի՞ և վառիվառ նեռւում է վեր
Եւ Անհունի անծայրածիր ոլորտներում
Շանթում է յորդ կայծէ հեռքեր...
«ԴրՐմմ-գո՛ւմմ... զրՐնգ-զրաննգ...
«ԴրՐմմ-գո՛ւմմ... զրՐնգ-զրաննգ...
Ու նաւում է, Միտքը թևում
Դէպ Յաւերժի կանչն ու կրակ...

* *

Ահա հեռուն. դարնանատես պանդուխտ Նաւակ, *
Գեղեցկութեան Յաւերժահարսն է Նաւավար...
Արշալոյսի լոյլն ու փայլակ
Նորան շոյում են լուսափառ...
Եւ լուսեղէն Նաւակի մէջ այն կախարդուն
Միշտ երգում են Երկնածարաւ վեհ Երգիչներ,
Եւ լողում է Նաւը փայլուն
Դէպ Զանգը վե՜հ, կանչը-անյա՜ղ...
«Դրմմ-դրմմ... դրննդ-դրաննդ...
«Դրմմ-դրմմ... դրննդ-դրաննդ...

Ես զգում եմ. ահա Բի՜ւր բի՜ւր Նաւեր խոհուն
Ժամանակի այս անկոպար ալեաց մէջին
Սահում են վեր, տենչում հեռուն—
Դէ՛պ Անյայտի ափը վերին...
Ահա կեանքը Աղատութեան ու Գերութեան...
Ահա անդուսպ վայելքների ծովը սուզած
Այս աշխարհի Տէրերն ունայն...
Ահա բանտում հալմաշ եղած
Խղճմտանքը... հարո՜ւստ, ապրա՜ռ... Սրտեր թշուառ,
Որ քինայոյզ Զախորդութեան ամպերի մէջ—
Խոր երկունքի կրծքում յամառ.
Հեղեղում են արի՜ւն անվե՜րջ...
Եւ այս ողջը—համայնական Մեծն Արշաւանք—
Զանգի կանչովն է կախարդւում... վե՜հ-վե՜ր նեաւում...

* Գեղաբնատ

Զրնգ-զրանգ... զրնգ-զրանգ...
Դրմմ-դումմ... զրմմ-դումմ...
Երկնածրար Յաւերժութեան Կոյս Բարձունքի—
Անհունի Զանգն է որոտում. «զրմմ-դումմ...
զրնգ-զրանգ...»
Որ խորհուրդն է Մեծ Տիեզերքի, վեհ հիւսածքի...
Նա է յուզում, նա է կանչում Սրտերն ու Կեանք...
Եւ դալիս է կանչը անհուն.
Որոտում է ու զրնգ-զրնգում...
Ու Աշխարհը, չորս դին, հեռուն
Ցաղթ Արձագանքն է կախարդում...

1905. Յունուար

* * *

Կայծակը ինձ նետ,
Անհունը հոգիս.
Աստղերը պատակ
Խրոխտ նակատիս,
Կեանքիս կապանքը
Փշրե՜մ ու երթա՜մ,
Հոգին էլ ինձ թե՜,
Հեռու սլանա՜մ...

Իմ երգն է Ղօպանց՝
Անհունին յատակ.
Աստուած լինելու
Ցնորքս անյապ,
Մանրութեան փոշին
Ինձանից ցրե՜մ,
Փառքի պաշտերում
Մեծ կուռք որոնե՜մ...

1903. Դեկտեմբեր

Ս. Զ Ա. Տ Ո Ի Թ Ի Ի Ն

(Մ. Ի.-ին)

Այն շղարշ ամպերի ծովերից
Ես հով-հով եմ փնջում.
Մրմնջուն ալիքի լապուրից
Թիթ ու շող եմ կորզում,
Որ շնչեմ սիրակէզ ալ-վարդին,
Եւ հնչեմ Եդեմի մեղեդին...

***

Երբ թառամ դաշտ, արօտն է դժխեմ,
Եւ հոլիան է սիրոյ հեծեծում.
Արեւի ցոլք ու շողքը վսեմ
Այս Երկրին եմ բերում.—
Ուր ծաղկում է Գարուն կախարդուն,
Ուր վառւում են Ցոյսերը անհուն...

***

Երբ լուսնակը թախծոտ ու խոկուն
Ցնորքի մէջ սուզւած՝

Միշտ մաղում է գալիք կուսությունն....
Եւ այիբը յուզած
Շշնջում և յորձանք է տալիս.—
Այդ անյապ իմ կարոտն են լալիս...

* *

Եւ հեռուն, ժայռերի կատարին,
Ու ծովում լաղուրի,
Ուր արծիւն է նախրում երկնածին.
Այն իմ թանկն է կարի,
Որ թեւերը է տալիս միշտ երան՝
Սաւառնել յաղթ, հպարտ ու միայն...

* *

Երբ ամպերն են կնճռոտ, խղճնոտ
Եւ նոցա ցանցի մէջ
Կաշկանդած են Որոտ, Դղրդի՜ւն
Եւ Կայծակը անշէջ
Բռնկւում է յանկարծ յաղթարար.—
Իմ կարոտն է շանթում նա յամառ...

* *

Երկնքի խորութեան անդունդում.
Երբ աստղերը—աչեր
Ճշմարտի՝ պլպլում են, շողում
Կուսութեան անուրջներ.
—Ե՛ս եմ այն Բովանդակ, երազուն,
Այնտեղ է՛ս եմ շնչում Վեհութիւն...

* * *

Այն իմ Շողքն է, ժպիտն հարազատ՝
Արշալույսը փնջել.
Այն իմ Ցոլքն է, իմ Լույսը ազատ
Վեհ Լուսաստղը Գգել. —
Ես Մաքի Թագուհին եմ անմահ,
Ու Արև՛, ու Երթերն են ինձ գահ...

* * *

Ես ժնեում, ես սնեում եմ Կեանքի
Ու Մաքի Երկունքում.
Գեղ Գարունը Լույսի ու Փառքի
Ինձ օրհներգ է հնչում...
Ես սիրում եմ ապա՜տ հեռունե՜ր,
Անսահման երազել դէպի վե՜ր...

1904. Հոկտեմբեր

*
* *

Էս կեանքը սև բանտ, էս կեանքը մութ խուց,
Ազատը Սիրող ի՞նչ ես որոնում.
Ձեռքերիդ Շղթայ, կեանքիդ ծանր լուծ,
Հերիք չէ՞ այդքան սգում ես, հեծծում...

Ա՜հ, Ազատութիւն, Սրտի արեգակ,
Մաքից էլ ես վեր. եթերը քեզ պահ.
Տենչ ու բոց սրտիս պապակն ես անյագ,
Վա՜հ Ազատութի՜ւն անհուն ու անմահ...

Զարնեմ նեղ ու մութ կեանքիս կապանքին,
Փշրե՜մ ու աղա՜ռ թափով սրանա՜մ...
Արժի՞ պէս վե՜հ, ամպերի փէշին,
Քե՜զ, Ազատութի՜ւն, դրկե՜մ ու երթա՜մ...

1901. Դեկտեմբեր

* * *

Վաղամեռ ընկերոջս՝ Անուշաւանի յիշատակին

Ամպաժրար սեգ ժայռերի կատարներին
Արժիւն է վե՞հ, որ Գահ ունի.
Սև ամպերից էլ վե՞ր, վերև՜, Աստծու մօտին,
Արժիւն է յաղթ, որ կը ճախրի՞...

Այս անարև դառն օրերուն անդթութեան
Գա՞րշ, արնախում կապանքից վեր,
Անհունի չափ սուրբ Միտքն է այն Աղատութեան,
Որ թևում է Արժի պէս անվեհե՛ր...

Ես դիտեմ—թող Անյուսութեան կրծքից եկած
Հողմերը չար, կենսակործան
Մեր վեհ Ցոյսի պարտիզի մէջ ծիլ արձակած
Տենչանքների վարդն ու շուշան
Քշեն, ցրեն դէպ Անցեալի մշուշը սև՛,
Բայց էլի մենք մեր սրտերում
Ունենք անյաղթ ու մշտավառ վսեմ Արև,—
Աղատութեան յոյզի ցոլքում...

Եւ քանի դեռ մեր լուսնի տակ լուռ ու խոկուն
Լեռները կան այն երկնահաս,
Որ մեծ Սրտի, մեծ Ցենչանքի միշտ երազուն
Աղատ Ոգու գահն են անհաս,
Եւ քանի դեռ Ազատութեան արեամբ ցողած
Պիտի հեծծեն վերջալոյսնե՞ր...
Օ՛, չենք կարող չի հաւատալ, որ լոյսաբաց
Ազատութեան կը գան օրեր...

1904. Ցունիս

* * *

Երնէ՞կ, երնէ՞կ,
Ազատ երազ նինջի ժամին,
Կամ բոց կրակ Մոքի՛ տեղ,
Լինե՞մ, թռնե՞մ մօտդ, անգին,
Կեանքի Արև՞ Ազատութիւն,
Փառաց Տաճար, Ազատութի՞ւն...

Երնէ՞կ, երնէ՞կ,
Ոսկի անուրջ լայն ճակատիս,
Երկնից տենչանք սրտիս ծովում՝
Ես իդձ լինեմ, ցնորք լինեմ,
Սուրա՞մ, ճախրե՞մ մօտդ, Գաղուն։
Մասսից էլ վե՞հ, Ազատութի՞ւն...

1904. Յունուար

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐԻՑ

Ինձ մի՛ յուղէ՞ք,
Ու մի՛ ասէ՞ք՝
Սիրոյ ժարաւ, անյոգ երգիչ...
Օ՜, ես դիտեմ, ես երգել եմ
Վարդը բուսած գեղ վայրերում.
Օ՜, ես դիտեմ, ես տեսել եմ
Սիրոյ տենդը կոյս աչերում...

Ինձ մի՛ յուղէ՞ք,
Ու մի՛ ասէ՞ք՝
Անդուսպ Սիրոյ խանդին կարօտ.
Ես Սէր ունեմ. այդ է սդում
Դալար հոգոի լացող ուռին.
Ես սիրել եմ, այդ են պատմում
Վեհ աստղերը մունջ դիշերին...

1904. Յունիս

* * *

Սո ր. Նաղան ին

Բո՜ւք ու Բորա՜ն... Ձմրան գիշեր.
Ո՜ւֆ... Երկաթէ Սառնամանիք—
Որպէս վիշապ գոռ գազանները,
Բերները բաց, փրփրաժանիք
Մռնչո՜ւմ են, հա՛ մրռմրռո՜ւմ,
Սրար Աշխարհ ահարեկո՜ւմ...

Ո՞ւր է, չը կան Արև՜, Գարուն,
Ո՞ւր է, չը կան Բլբուլն ու Վարդ.
Վշտի՜ աշխարհ... Վիշան է անհուն,
Է՜լ վա՜խ, Կեանքը՝ ցո՜ւրտ է, անզարդ...

Տե՜ս, քամին է, քամին վայրագ
Դռները բաղխո՜ւմ, զարկո՜ւմ Սրտին.
Քամին է խօլ թռչո՜ւմ արագ
Յոգնածութեան կնիք շրթին...
Ի՞նչ է կորցրել... ի՞նչ է ուզո՜ւմ.—
Երգը թախծոտ ի՞նչ է խօսո՜ւմ...
Նա վրշվրշշո՜ւմ... տաղտո՜ւկ լալիս,
Խորտակ սրտիս ծայն է տալիս.

Ձայն է տալիս...
Գարնան Յուշե՞ր, Սէր ու Խնդում,
Ցնորքների ոսկի Կամար.
Դալուկ Մահու ցուրտ մահիճում
Է՛ յ վա՞խ քնէ՞ք, զգէ՞ք իրար...
Ձմրան շնչով այս մութ գիշե՞ր
Նինջ եմ հիւսում ես ձեզ համար...
Նա վրշվրշշո՞ւմ, տաղտո՞ւկ լալիս,
Աւեր սրտի՞ս ձայն է տալիս...

1904. Դեկտեմբեր

ԵՐԳՍ ՈՒ ՀՈԳԻՍ

Արնակարկաչ Կեանքի հովտից Ծով պսակով
Անյուսութեան դանդաղ ու քարշ Ամպերն ելան...
Գերեզմանաւոր նի՞նչ Լռութեան կամարներից
Անուրջ ու Իղձ հրեղէն թեւով դողդո՞ջ առան...

Մանուկ Սրտին Սէր աւետող վերջալոյսին,
Երբ լուսաբեր ու կենսատու վսեմ Ոգու
Ըստինքը ջերմ իմ շրթերից էլ հեռացաւ,
Անսէր Հոգուս անարեգակ Ծով երկնքից՝
Կեանքիս Ջահե՞ր, երազ Ասպե՞ր
Կայծակային Վշտի թափից
Մէկի՞կ, մէկի՞կ ընկան... կորան...

Ո՞ւր է, աւա՜ղ,
Գարնանաշունչ Տենչանքներիս
Այն յաղթական Արեւը վառ...
Ո՞ւր է, աւա՜ղ,
Վեհատեսիլ Աստուածների
Երազանքս արշալոյսուղ.
Թռիչքն Հոգուս հպարտ... յամառ...
Չը կա՜ն... չը կա՜ն...

Եւ իմ հոգին, որ Մեծ Յոյսի
Արեգակուոյ Երկինքն էր լայն,
Նման է սին ու փուլ եկած,
Հիմքը խախտուա սեաւոր տան...

Հեղեղապէս Կեանքի դաժան Ծանրութեան տակ
Կրքոտ Յոյսերն, հոգուս Սիւները շուտ կոտրան...
Եւ մատոյիր, հաճանչագեղ Պատերն հոգուս,
Որ Մեծ Աւեան, Աստուածութեան
Հոգոր ու դև Ցնորքներից էին նիւթուած
Փլան... ընկան...

Եւ այդ անշուք Աւերակայ մէջը այսօր,—
Ուր մունջ ու լռուռ վշտաստեսիլ դերեզմաններ
Վաղաթառամ Տենչանքների և Ըղձերի
Դարձած երկինք բոցոք... վրէժ են մրմնջում...
Վհատութեան ու սև Մահու
Շատ վրաններ կան տարածուած...

Եւ այն խորտակ Աստուածութեան տեսեան տակից
Ցայտում է յորդ, մահակարկուչ և արնաշիթ
Բիւրեղ Աղբիւր...
Այն արիւնոց վշտատարաց Աչքունքներից
Հիւսում եմ ես Երգերը իմ բոյլ մարդարիտ...
Իմ Երգերն են այն Աղբիւրի մշտակսկիծ
Ցայտերը բիւր...

1903. փետրուար

ՅՈՅԶԵՐ

Իմ կո՜ւռք... Իմ Աստո՜ւած...
Հոգիս հրդեհուեց քո Գոռ Ծարաւի՜ դ,
Օ, չլկա՞ս, չլկա՞ս... Անդարձ Գարունքիս՝
Արշալոյսի պէս՝ յուսավառ շէմքին
Երբ Հոգուս ոսկի յոյսերի ցանցում
Շողշողում էր յաղթ տենչերի Արե՜,
Ես Ծունկ չոքեցի բարկ, ծովանման
Կեանքի սեղանի առաջ անխնդում.
Եւ Սիրտս ուխտեց... կրքոտ իմ Հոգին
Այն օրից վե՜հ-վեր.
Դէպ՝ Լոյսը շողա՞ց,
Ու Միտքս թափառ Տիեզերքի ափեր
Ճախրեց շանթածե...

* * *

Իմ կո՜ւռք... Իմ Աստո՜ւած...
Անհունը Գրկող՝ յաղթ կայծակների
Բոցաթոյր Ծովում սուրբ ժնունդ առած՝

Թևերը Մաքիս վեհ-վեր տարածե՞մ...
Եւ հեղեղն Հոգուս—Ոգու հոծ հեղեղ—
Մեղսոտ այս Կեանքի երեսին ցրեմ...
Եւ Ցնորքների հպարտ պեսց մէջ,
Եւ աստեղանիշ Ցոյսերի բիւրեղ
Կամարների տակ ճախրե՞մ ու նաւե՞մ...
Կաշկանդ Օրտերի
Կապանքը փշրե՞մ...
Առաջատաս լայն... Փառքը, Կռուքը իմ
Յաւէտ որոնե՞մ...

1903. Դեկտեմբեր

*
* *

Վաղամեռ ընկերոջս—Յովհաննիսի յիշատակին

Օրերն ու Տարիք մէ՛կ մէ՛կ միալար,
Որպէս քինայոյզ դժխեմ ջուլհակներ,
Որ Յաւերժութեան առաջ յաղթաբար
Մանում են, հիւսում սև Պատանքը մեր,
Գալիս են, սահում... մռայլ ուսերին
Դրած ամպերը խեթ Զախորդութեան.
Բերում են, լցնում խղճո՛ւկ մեր հոգին
Թոյնով, ախտերով խոժո՛ռ Մթութեան...

Եւ մենք այս Բանտում—Աշխարհի Բանտում—,
Զանձրոյթ ենք ծծում կենաց Ակունքից՝
Եւ մեր սուրբ հոգին Ազատ է տենչում,
Ազատ ու հեռու Կապանքի հոմից...
Օ՜, սա է միթէ վնհ Կեանքը բուրեան,
Կեանք հոգու, Մաքի՜... Սին հիւանդանոց,
Ուր միշտ վխտո՛ւմ են Վէրքեր անպարման,
Մռմո՛ւռ ու Շիւա՛ն և յորդ Լա՛ց ու Կոծ...

Եւ բիւր երանի՜, ով գիտէ ղգալ
Յաւերժ Թափառման բերկրանքն անարատ.
Եւ կեանքը տաղտուկ միշտ նորա համար
Եղել է վսե՜մ անծայր Որոնում...
Որպէս երկիրը, որ դեռի թափով
Իր խո՜ր Ձանձրոյթից փախչում է անյապ.
Որ դիշեր, ցերեկ անհանդի՜ստ, խռո՜վ
Նետւում է առաջ խոժո՜ռ ու մենա՜կ,

Շրջե՜լ... թող այդպէս ծանծրացած Հոգին
Զգայ ու շոյէ Քաղցրութեան Բարձունք,
Եւ թոթափէ իւր Թախիծը մթին...
Թափառե՜լ հեռու, դէպ հեռո՜ւ ափունք...
Եւ Թափառման մէջ հարբել ու կորչել.
Թող շունչը նորա հնչէ վեհ օրօր.
Նորա ալեաց մէջ յաւէտ մոռացեալ.
Մոռացե՜լ, ծծե՜լ Աղատն ու Անդորը...

1904. Սեպտեմբեր

ԱՐՇԱԼՈՅՍԻ ԱՌԱՋ

Վիկտոր Մանուէլեանին

...Ժամանակի երկաթ հողմերի
Անդթութեան տակ
Հալումաշ եղած ընկեր սիրելի՛,
Երբ անարեգակ
Հոգիդ կնճռոտ... և դու մենաւոր
Անընկեր շրջե՞ս...
Եւ շատ էլ Սրտեր փշրող ահաւոր
Մրրիկնե՞ր տեսնես...
Օ, բնա՜ւ, երբէ՞ք այս վեհ Բնութեան
Վեհ օրէնքներին
Դու չբտաս անուն կոյր Անմտութեան...
Չի մեր սուրբ հոգին
Երբեմնի ժամին դիտէ ճանաչել
Կարող Անհունի—
Անհաս Սրբեսի համայնապատկեր.
Երբ լուծը կեանքի

Իրենից թափած՝ նա վարկենաբար
Աստուածատեսիլ
Հրաշալիքների առաջ մտալար
Կանգնէ՞ զմայլի՞լ...

* * *

Ո՞վ չի հմայւում վեհ Արշալոյսով
Արեամբ հրդեհուած.
Երազների մայր, Յոյսի վարդերով
Յաւէ՞ս շաղախուած...
Այն Արշալոյսով, որ Հոգիների
Անյայտ Աշխարհէն
Սուրբ ծնունդ առած, դանդաղ Օրերի
Օրրոցի միջէն
Ամէն առաւօտ, ամէն առաւօտ
Շողքով փրկութեան
Յիշեցնում ձեզ Հոգիներ մեղսոտ,
Սուրբ Ազատութեան
Արիւնով գնուած Փարոնն հեռաւոր,
Որ Աստուածային
Նախածեռնութեան թափով լուսաւոր
Տրուած է Կեանքին...

* * *

Ես լաւ գիտեմ, ով անկարեկիցներ,
Այդ նեիրական
Արշալոյսները, որ մեծ Երազներ
Մեզ կը խոստանան,
Անդրադարձումն են մեր Հոգու խորքում

Միշտ կամար կապող
Արշալոյսներին, որ մի՞շտ, անպատրում
Փայլով խենթացնող
Վառ շողշողում են մեր աճիւնացած
Վեհ Տենչանքներուն
Շիրիմների մէջ... Օ՛, արիւնկալած,
Յաւէտ կախարդուն
Արշալոյսն է յաղթ Աստծոյ Ժպիտ՝
Թաղնուած մեր Հոգում,
Որ իբրև Երկնից Անուրջի սուրբ շիթ
Շողո՞ւմ է... կոչո՞ւմ...

1904. Պարիս

* * *

Սիր. Սվեշնիկեանին

Աստղերի ցանցում, ամպերից էլ վե՜ր,—
Խո՜ր, անուրջային բիւրեղ բարձունքում,
Ուր վեհ Ճշմարիտն, Յոյսը, Գութն ու Սէր
Սուրբ Սպասումեան երազ կամարում
Շողում են անհուն,
Շնչում են Գարուն,—

Ես Ցնո՜րք ունեմ... Ցնորք կաթոգին,
Արնավէժ Կեանքի ափերին փնջած...
Եւ քանի այսպէս Կեանքում արտմագին
Պիտ իշխեն Բռունցք, Սուտն համատարած,
Երկնքէն վսե՜մ
Ես դա՜տ կ'աղերսեմ...

Ու Միտքս աղա՜ռ... Ես էլ լաւ գիտեմ,
Որ Կեանքը այս կերպ չի մնայ խաւար.
Յորձանքը Արեան, Կեղծիքը դժխեմ
Հիւրեր են միայն, կանցնեն անհշմար...
Եւ բիւր երանի՜,
Ով մեծ Սիրտ ունի,

Սրտի խորանում Տենչ Աստուածութեան.
Ով Գալիք Գարնան Յուսոյ պարտիզում
Գեղ Վարդեր ունի կենա՜տ ու բուրեա՜ն...
Օ՛, նա կը տեսնէ այն չի՜նչ երկնքում
Յաղթ լոյս Գարուն,
Յաղթ Ազատութիւն...

1904. Մայիս

* * *

Մեր Լայն երկնքում բանակ առ բանակ
Դիզած են ամպեր անյոյս Դառնութեան.
Մեր վեհ Սրտերի երգերն ու նուագ
Վշտի յորձանքից խպտոռ սևացան...

Եւ եղեմական Վայրերում փարթամ,
Ուր կեանք էր հոսում Գարնան կարկաչով,
Ամիւնն ու մոխիր անիայլ ու թառամ
Պատել են չորս դին Մահուան համերգով...

Եւ Յաւերժութեան կրծքից միալար
Սահում են Դարեր խոժոռ ու դաժան...
Եւ Նիրիմ դառած մեր Սրտի համար
Ոչ Յոյս կայ, ոչ Սէր, ոչ էլ Լոյս Գարնան...

1904. Ապրիլ

* * *

Աշխարհի տէրեր.
Կռանը մաքէ, շանթից տհաւոր,
Յաղթ Զեռս առած, ես ձեզ եմ դիմում.
Անթև, անթռիչք, ըղձազուրկ, մոլոր,
Գծո՜ւծ հոգիներ...

Կապանք սիրելով՝
Անհոգորդ էք Դուք վեհ-վեր Սրտերի
Աստուածավայել յաղթ ցնորքներին,
Որ արևում են յանուն կուռքերի՝
Փառաց բոյլերով...

Նայէ՛ք սրտմոլոր.
Գերեզմաններին յատուկ, անվայել,
Դէշ ունայնութեան Մշուշի տակից
Նայէ՛ք դէպի ինձ... Հոգու յուսաբեր
Ես Մուրճն եմ խոժո՜ռ...

Սրտեր տենչկորոյս,
Հոգեծին Մուրճով, ճակատս Արև՜,
Աստուած եմ ես ծեզ, սոզալ իմացող
Ստոր զաւակաց... իմ Երդն է սև՜, գև՜,
Տենչանքս վե՜հ... լոյս...

Եւ անհունացած՝
Կեանքի Արշալոյս, մտքերի Զեղում
Իմ հոգի Մուրճով զարնեմ... կը փշրե՜մ
Սրտերը աւեր, որ չեն նանաչում
Ցնորքի Աստուած...

1903. Դեկտեմբեր

***

Գիշերն է լռիկ և ջինջ երկնքէն
Աստղերի ցանցից խորհուրդ է կաթում.
Եւ շողքը լուսնի—ժպիտ Դալկութեան—
Լեռներն է ցոլում, հովիտն արծաթում...

Եւ մութ Սրտերի Ցենչանքը անփայլ
Կեանքի Օրրանից եթերը եկած՝
Մենակ ու մոլոր փնտռում է Բաղձանք
Անմէր Խեղճերին վշտից տապակուած...

Հպարտ ժայռերի ափունքը մռայլ
Ցուշիկ շշունջով ծեծում են ալիք.
Եւ այն մեղմ ալեաց մրմունջը վսեմ
Հնչում է Սրտին օրերը Գալիք...

1903. Ապրիլ

ՆՍԻՍՀՍՆԳԻՍՏ

Անոյշ քրոջս՝ Խանումին

Նաւահանգիստ...
Վսե՞մ հոգու չնաշխարհիկ, կախարդուն վայր.
Որքա՜ն Գիտես Դու հմայել,
Իդձը հեռո՜ւ, հեռո՜ւ կոչել...
Յաւերժական Երազներիս վեհագուրթ Մայր...

Հազա՞ր ու բի՜ւր Սիրտ ու Նաւեր Կեանքի Ծովում,
Զախորդութեան հողմերի մէջ՝
Զարկւո՜ւմ են յար, տանջւո՜ւմ անվերջ,
Դէպ փրկարար դարձած ափունք, Քեզ են ձայնում...

Քանի՞, քանի՞ միշտ երպա՞ն վեհ մենչանքներ
Մահ են ժժել՝ քեզի՞ կարօտ...
Քանի՞ Սրտիս նոր Առաւօտ,—
Զր յօրինես Յուսոյ փարթամ ծաղկապաշտեր...

Նաւահանգի՞ստ...
Յուսաժնունդ Արևների սուրբ Օթևան,
Որ Սրտերի վեհ երկնքում
Աղատ Գարո՞ւն, Լոյս ես շողում,
Ա՜հ, ո՞ւր ես... կա՞ս... սուրբ Ցնորքիս անմահ Կայան...

1904. Սեպտեմբեր

ՄԱՆԿԱՆ ՕՐՕՐՈՑԻ ՄՕՏԻՆ

Այս դառն Աշխարհի դժբախտ օրերի
Անգութ հոգմերի առաջ մատաղ՝
Կանգնած եմ, մանուկ, օրրոցիդ վերև,
Հոգիս կնճռոտ և վշտաձրաք։

***

Ասա՛ ինձ, մանուկ,
Գիտե՞ս, որ շողքը յատակ Ցնորքի
Իր վեհ ալեաց հետ աշխարհ քեզ բերեց
Որ կարծես քաշես ազատ Գարունքի...

* * *

Բայց Դառն է Ուղին... յանուն Վեհութեան,
Հեռու և Կոչող Անյայտի համար—
Մենք վի՞շտ ենք ժժում սպունդի նման,
Մենք շատ ենք անցնում Անգունդներ մռայլ...
Օ՜, բի՜ւր երանի, անմեղ իմ մանուկ,
Թէ դու դիտենաս, որքան սե՛ ամպեր
Գերեզմանաժին անյոյս Ցանցանքի,

Կամ ո՞րքան կեղծի՜ք, մրո՜ւր, սուտ ու լայ,
Ո՞րքան քմհաճանք Կայր Ժամանակի
Կեանքիդ կամարում բանակ առ բանակ
Ակնկալում են քեզի անդատար...

*
* *

Ա՜խ, քնքուշ մանկի՜կ, որ այդ օրինակ
Հոգի դու ունես բիւրե՜ղ ու զուլա՜լ.
Բայց չե՜ս խուսափիլ երկաթ օրերուն
Սև՜ անգթութեան Մռայլ Կապանքից...
Եւ թէպէտ այսպէս Լուսնեակը խոհուն
Երկնքի Գահից մի՜շտ, ամե՜ն դիշեր
Անյուսութիւն է ցօղում մեր Դաշտին,—
Դու ինձ հաւատա՛, սիրուն իմ Մանուկ.
Կապանքի, Արեան այս դժխեմ Հովտին
Արշալոյսնե՜ր կան...

* * *

Եւ նենդ հողմերը ծախորդ օրերի,
Ու ճակատագրի խաղերը դաժան
Կամո՜ւրջ են միայն դէպ այնտե՜ղ... հեռո՜ւն,
Ուր մերն է Յոյսը, և Արև՜, և Սէր...
Հաւատա՛, մանուկ, ծախորդ օրերուն
Հետևելու են վտե՜մ Բարձունքներ...

1904. Յուլիս

ՑՆՈՐՔ ՈՒ ԹՌԻՉՔ

Աժդրհայ և անպարտ ձակատին շարէշար
Մէջք մէջքի արած յաղթ լեռնացած կնճիռներ...
Եւ իգիթ Աչերից արնաշիթ, հրախառ
Հեղեղուող Արցունքի բարկաճայթ լայն ծովեր...
Միշտ վկայ են անմեռ... ո՜, վկայ են հպօր,
Որ գալիք օրերի անթափանց Մէղի մէջ
Կեանքն ունի գաղտնացած վեհ Գարուն փառաւոր...

* * *

Պատերազմ, ծով Արեան... Դիակնե՜ր հեղեղած...
Թող Տէրերն Աշխարհի շահամոլ Գրպանին
Գերիներ ճանաչեն... Թող անկուշտ, արնախում
Գաղաններ հոչակեն... և գժոխք Թող լինի...
Բայց այնտեղ, ցնորքոտ Անհունի կրծքի տակ
Արշալոյսը Կեանքին մեծ Գարուն է հիւսում.
Մեղ այնտե՞ղ է տանում Շանթ-Հողին 'ի շտակ...

* * *

Պատմութիւնը Ողբերգ է արնոտ և տխուր
Կեանքի Ճանապարհին։ Ճանապարհն այս անծայր
Մերը չէ՞... մենք անցնում ենք հեռուն, դէպ այնտե՞ղ,
Ուր անմեռ Աստուածներ Ոգու ժով են ծորում...
Մերը չէ այս ուղին, սա անցեւոր է, անփայլ...
Շանթ-Հոգին, որ մեզի 'ի շալակ է տանում,
Ճանաչում է Տածորը փառաց ըղձավառ...

* * *

Այս ուղին մերը չէ՞... Մեծ Հոգին Թեւանի
Մեզ տանում է օտար Աշխարհի դաշտերով...
Եւ Անմեռը, Անկախը Թափով կայծակի
Մեր Թռիչքը դիտում է անհուն իր Շնչով...
Այս ուղին մերը չէ՞... Դժոխք Ճակատագրի
Սահմանումն է ընկած մեր ուղին... որտեղ ժով
Եւ հեղեղ կայ Արեան, Կրակէ վշտերի...

* * *

Այս ուղին մերը չէ՞. սա Կամուրջն է փառաց.
Մեր Արե՞, մեր Կուռքեր այն Ափին են, այնտե՞ղ...
Մեր Թռիչքն է անհուն, մեր տաճար լոյստարած...
Շանթ Հոգին Թեւանի կայծակնա ու անեղ,
Որ ճախրում է, տանում մեր Սրտերն ի շալակ,
Այն սուրբ Կիրքն է Կենաց և Հոգու մեծութեան,
Որ վառել է առմիշտ և վառում է անյապ...

* * *

Մեր Հողին է հպարտ...
Նա հեղեղ է Կրքի՝ մե՜ծ, արի՜ տպրելու...
Եւ եթէ Սրտերի ամպածոր երկնքում՝
Արնացող ճաճանչի գալարուն խուրծերու
Ծովի մէջ արեւում Տենչանք փրկութեան.
Եթէ կայ Հոգու շանթ ու Մտքի հեղեղատ.
Կայ և Կիրք գանելու Բարձունքն Ազատութեան...

* * *

Մեր Սրտե՜ր... այնտեղ կայ Երկի՜նք ու Երկիր...
Ամե՜ն ինչ, ամե՜ն ինչ... մեր Սրտերը անհուն
Անեղին հայելի են շողոտ, մատցի՜ր...
Յաղթ Անմեռը լաղարթ Լազուրից ատղաւուն
Արեւներ է չանթել... մեր Սրտումը թաղել...
Մրրկոտ երկնքից շանթ, կայծակը խլած՝
Ըղձերի փաթեթով մեր Հոգումն է հեռել...

* * *

Այդ Կայծակն է յաղթ Կիրք Արեւի՜, Մեծութեան.
Այդ է շանթագալար Իրաւունքն ապրելու,
Որ փարթամ ըղձերի ծովի մէջ անսահման
Թև ու թաւփ է տալիս դէպի կո՜ւռք ճախրելու...
Այդ Մրրիկն է Հոգու, Սրտերի թագաւոր,
Որ գայրոյթը շանթէ ճակատին պսակած՝
Արիւնե՜լ է անվերջ ովկեանների՜ վշտաւոր...

* * *

Այդ Մրրիկ Իրաւունքն է մեր շունչը անմեռ,
Որ տանում է մեզի դէպ Արև 'ի շալակ.
Ահեղ Կիրքն է հոգու, որ Մանդաղը Մահու
Բռնած՝ կեանք է հնձում... և ծովեր արիւնում...
Թոյլերին նա տառում է Կրքով դժնդակ.
Իսկ Նոցա, ով անչաղթ է հոգով, թռցնում...
Ու թևում է հեռուն... Դէպի վե՞ր, Արեգակ...

* * *

Այդ Մրրիկ Իրաւունքն է անհաս թագաւոր
Աժդրհայ Սրտերի և Աստուած Տենչերի.
Այդ հոգին է Ցնոր, որ կեանքի Սևաւոր
Օրրանից Արեան ծով ծորելով... Աղջերի
Գերեզմանը նիւթեց... և ապատ Սրտերին
Թևանի՞, 'ի շալակ դէպ Անհունը բերեց...
Այդ վեհ Կուռքն է հոգու ու Կեանքի փառաձին...
Իրաւո՞ւնք... Իրաւո՞ւնք...

1904. Ապրիլ

ԿԵԱՆՔԻ ԱՓԻՆ

Պողոս Աբելեանին

Ճակատիս խատացած անծայր Վշտերի
Այս ծով ամպերից ըղձեր եմ երգում.
Սրտիս զէգ-զիզւած, որպէս վեհ Տաճար—
Հպարտ Յոյսերից Արև՜ եմ հիւսում...
Անյաղթ Ճշմարտի գարնան շողերից
Նիւթում եմ Արև՜ կեանքի Մեծութեան.
Ով դիտէ ապրել, թող ապրէ միայն...

* * *

Ես շատ եմ ապրել. ես յաղթ եմ ապրել.
Ամպեր են գրկել երկինքը Սրտիս.
Փորձանք, հալածում, մրուր Գերութեան,
Որպէս թուխ մշուշ, հոգուս անգունդում
Կամար են կապել, կամար Դառնութեան...

* * *

Անգարձ օրերի մի Կոյս առաւօտ
Կայտառ, ժպտերե՜ս, վառվռուն յոյսով,
Սիրոյ տենչերի Դարուանքին կարօտ՝
Ես Կեանքը մտայ երկիւղած Սրտով...

Ազատ Ցնորքի թերթերը բռնան.
Սրտիս դաշտերում, Ծաղկունքը վառեց...
Անմահ լույսերի երազուն Շուշան
Երկնի՜ Բուրմունքով իմ Կեանքը լցրեց...

* * *

Անցան տարիներ.
Զախորդ օրերի անգութ Անիւներ
Մէ՜կ-մէ՜կ փշրեցին վարդերն իմ Աւեան.
Եւ կոյս Տենչանքիս Արևն ու Աստղեր
Մէկի՜կ ու մէկի՜կ ընկան... ահ, կորան...

* * *

Ես ժունկ չոքեցի
Մռայլ այս Կեանքի Սեղանի առջև,
Աղերս մեկնեցի...
Արցունքը ծորաց... և ժով հեղեղուեց...
Եւ վեհ Սրբութեան կեանքի Բարձունքից,
Ամպի պէս դժդոյն, Լոյսի պէս աննիւթ,
Կայծակի թափով Խորհուրդը կենաց,
Որպէս վառ Երազ կանգնեց իմ դիմաց...
Մրրիկը պայթե՜ց... դղրդա՜ց Որոտ...
Զարգանքը տիրեց անփայլ Սրտերին...
— Ես փառքն եմ Կեանքի, ես Միտքն եմ
Թափոտ—

Արե՜ Մեծութեան...
Ով դիտէ ապրել... ապրե՞լ ու բզգա՞լ՝
Սրտի երկունքով Աշխարհի Ցաւում.
Ով դիտէ անյաղթ տանել ու տոկալ
Վսեմ Լռութեան այս Կոյս Ցանձարում՝
Խորհուրդը Կեանքի—Աշխարհի կոչման
Լոկ նա կիմանայ հպարտ ու միայն...—

* * *

Անյապ տենչահիւս Խորհուրդը Սրտի,
Ազատ Հոգու պէս, շէկ Շանթի նման,
Այդպէս մրմնջաց մրմունջը փառքի,
Այդպէս շնչաց կոյս իղձը Գարնան...

* * *

Եւ Սիրտս ասես բարկ ծով վրդովուած.—
Ահեղ Ալիքներ Զարի ու Բարու
Եկան զարկեցին Կրծքիս սևամած...
Կեանքի Դառնութեան յորձանքը մթին
Եկաւ ու նետուեց Ցոյսիս Ժայռերին...
Ես թափ տուեցի Թևերը Հոգուս,
Ուժգին զարկեցի Սրտիս լարերին...
Ու ես իմացայ, ու Միտքս դառաւ
Անյայտը Կեանքի...
Հեռու ափերին կանգնած վիթխարի՝

Անփայլ Լռութեան տաճարն է խորհուրդ...
Կեանքի ահաւոր Մրրիկը դիտող
Բիւրեղ Լռութեան զողջոջ խորանում
Թաղուած է Գաղտնիք — Իմաստար կենաց...
Թռիչքը Մաքի...

* * *

Այնտեղ, ուր լեռներ, լեռներ ամպրհայ,
Որպէս քաջարի ու սերտ Եղբայրներ,
Մէջք մէջքի տուած՝ մռայլ, անվեհեր
Նայում են դէպի Երկինք անկոպար.
Նայում ու բողոք դրկում առ Աստուած...
Այնտեղ ամեհի ժայռերը խոհուն՝
Նօթերը կիտած, ճակատով կնեռոտ,
Խոժոռ ու անհաշտ նայում են հեռուն...
Կեանքի ծովափին, ուր յաղթ Ալիքներ
Կեանքի Արդանդից՝ փրփուրը հագած՝
Գալիս են հուժկու, գալիս ու կրծում
Ժէռ կուրծքը ափի... Որպէս վայրենի
Գազան կատաղած, յուզուում են ուժգին,
Զարկուում են, զարկում... Ժայռեր կրծոտում...
Այնտե՞ղ, սեամած Կեանքի ծովափին
Ես խոհ Լռութեան տաճար հիմնեցի...
Երաղ լռութեան անհաս Խորանին
Ու սիրտս, ու Հոգիս ես զոհ բերեցի...

* * *

Եւ շուրջը անհաս Գարնան Տաճարի
Մեռած իմ ըղձե՞ր, մանուկ երազնե՞ր,
Անգարձ մանկութեան յոյգեր Բերկրանաց,
Այդ ոգեղը արնոտ հողում թաղեցի...
Եւ շուրջ կապեցին թախծոտ Նիրիմներ,
Մռմռուռ հիւսեցին սգաւոր Տենչանքներ.
Խաչի փոխարէն լալկան ուռենիք
Ցաւոտ մրմունջով երգեր հնչեցին...
Եւ ես քար կարած՝ փարթամ Լռութեան
Խնկէ Խորանից ազատ ճակատով
Դէպ Կեանքը դարձայ...

* * *

Եւ կուրծքը ուռցուց մեծ Կեանքը արնոտ,
Եռաց... փրփրաց ահեղ յորձանքով.
Ալիք լեռնապէս՝ փրփուրը բերնին՝
Կատղած շան նման ոռնում էին դոռ...

* * *

Որպէս պարզամած լաղուր դիշերին
Անխօս ամպերի սգաւոր կարաւան,
Որ լռեռ ու մնջիկ անցնում է յուշիկ
Լուսնի առաջով ճամբան ծանձրալին,—
Սուզ, լաց, հառաչանք Կեանքի անգունդից

Ելան շարէշար,
Եկան ու անցան աչքիս առաջից...

*
* *

Որպէս լուս ու մութ պահին վաղորդեան
Ծիւ-ծիւ թռչուններ շարան ու շարան
Ճախրում են օդում, թռչում են հեռուն,
Արիւն ովկեանի հեռո՞ւ ափերից
Ցոլե՞ր ու ցոլքե՞ր եկան քրքիջով,
Եկա՜ն... և նորից անհետ էլ կորա՜ն...

Եւ որչափ ջիւան Կեանքի հատորներ՝
Արիւն ալեայց հետ քշուց խառնիխուռ...
Եւ որչափ հալմաշ խղճո՞ւկ հոգիներ,
Տառապած Սրտի հառաչ ու մռմո՞ւռ,
Ոսկի Անուրջի ցրտացած մոխի՞ր—
Հոսանքը ալեայց քշում էր հեռուն,
Քշում ու նետում ափի ժայռերին...

Տեսայ ես Կապա՜նք... Ցղթա՜յ... Գերութի՜ւն...
Ամե՜ն, ամե՜ն ինչ տեսայ բարկ մռմում.
Եւ հպարտ Մաքի կնճիռը խոժոռ
Բանում էր ճակատս, անվե՜րջ խտանում...

* * *

Եւ շատ Գարուններ փարթամ ճոխութեամբ
Զառբար պճրանքով եկան ու անցան,
Անթիւ Զմեռներ սրտամաշուկ շնչով
Տանջանք բերեցին, անպարծ էլ կորան...
Եւ շատ, շատ անդամ Գարնան դալստեան
Երաց թռչուններ համբոյր քրքիջով
Լռեցի՜ Ցաղթանակ, Արև՜ երգեցին...
Եւ շատ, շատ անդամ Աշնան շնչի տակ
Ալ-բալ կանաչներ թառամ թօշնեցին...

Սրտերը խամրած, մոխիր հոգիներ,
Ամեն, ամեն ինչ հզօր ժամանակն
Դժխեմ, մահասփիւռ իր մեծ թևի տակ
Քշում էր դէպի Մշուշն Անցեալի...

* * *

Եւ հս իմպոյալ Գալուստոր Գարնան,
Ու Սիրոս գգաց Իմաստոր կեանքի...
Մենակ ապրելու անհուն Ցնորքի—
Ապատ ապրելու անհաս Տենչանքի
Հպարտ Խորհուրդն է Փառքը կենաց...

* * *

Հեռու Սասուրթեան այն ծովը գծուած,
Որի մէջ լողում, նեխում են Սրսեր.
Սուտ... սուտ... չրկայ Սէր, չրկայ Մերձաւոր.
Մարդիկ չեն կարող իրար հասկանալ,
Անկեղծ ու հոգով իրար նուիրուել...
Եւ լոկ այն աստէն Գարուանը կրգայ,
Կրգայ Վնհուրթեան Խորհուրդը կեանքի,
Երբ Արեան ծովում,—միշտ առանց Սիրոյ,
Որ յաղթ Մնծուրթեան անկումն է միայն,—
Արիւն Ալիքի կարկաչ Երգի տակ
Սուրբ Ծնունդ առնէ Իմաստը Մաքի,
Եւ Աստուած գառնայ մեր Եսը ունայգ...

1904. Յունուար,
Փետրուար

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ, ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան . . . 10 կ.
2. Մահմեդ՝ » » » . . . 7 »
3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. . . 5 »
4. Սահակ Պարթև՝ » » . . 5 »
5. Հաուպման՝ » » . . 15 »
6. Մեծն Ներսէս՝ » » . . 5 »
7. Զրադաշտ կազմեց Մ. Թամամշեան . . 7 »
8. Ընտրութիւն կաթնատուների (26 պատկ.) Գ. Մեծատուրեանի . . . . . 15 »
9. Ռ. Վիրխով՝ կազ. Ս. Բուդուղեան . 25 »

Շուտով լոյս է տեսնելու՝

Պուշկին.

Պատրաստ է տպագրութեան համար՝

Ս.Ա. Քալանթար.—Հանրամատչելի ժեռնարկ կաթնատնտեսութեան:

Պատրաստուում են նոր հրատարակութիւններ:

ԴԻՄԵԼ՝ 1) С.-Петербургъ: И. М. Аравянцъ Лиская 38.

2) Тифлисъ: Книжный магазинъ Гуттенберъ.

3) Баку: Т-во „Прометеусъ". Красноводская д. Амировыхъ.

891.99
Ֆ-20

ԳԻՆՆ է 30 ԿՈՊ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028284

A II
28284